ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՋՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «01» օգոստոսի 2016 թ.

2016թ-ի օգոստոսի 01-ին՝ ժամը 14:30-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀՋՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Կարեն	Թաթարյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի զբոսաշրջության զարգացման և խթանման բաժնի զբոսաշրջային արդյունքի զարգացման մասնագետ – բաժնի ղեկավարի ժ/պ.
Գոհար	Առաքելյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի զբոսաշրջային ծառայություններ մատուցողների աջակցության բաժնի մասնագետի ժ/պ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գնումների մասնագետ:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Կարեն Թաթարյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀԶՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց և վերջիններիս կողմից ներկայացված հայտերի գնահատման մասին:
2. Մասնակիցների կողմից առաջարկված գների, բանակցությունների արդյունքների մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀԶՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԱՌԱՆՑ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՎԵՐՋԻՆՆԵՐԻՍ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Կարեն Թաթարյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 650 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

• ՀԶՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձիք (այսուհետ՝ նաև մասնակիցները).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԱՆՏԱՐԵՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Մ. Մաշտոցի 50ա/1
2.	«ՀԱՅԿԱՐԼԻ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Կիևյան 18/6

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

• Մասնակիցները հայտերը պարունակող ծրարները կազմել և ներկայացրել են ՀԶՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես

հրապարակելու բանակցային ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան.

• Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում բացակայում է տուժանքի մասին համաձայնությունը (մասնակցության հայտի ապահովում, հավելված 9):

Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը՝

Որոշվեց՝

1. Կարեն Թաթարյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.
2. Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել անբավարար և մերժել:
3. ՀԶՀ-ԲԸԱՀԱՇՁԲ-16/1 ծածկագրով ընթացակարգը հայտարարել չկայացած:
4. Հաստատել առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԵՐԻ, ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հարցը օրակարգից հանված է:

3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին

Հարցը օրակարգից հանված է:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Կ. Թաթարյան

Հանձնաժողովի անդամ՝

Գ. Առաքելյան

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան